# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու
մարզի Շահումյան համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.
Շահումյան 1փ. 66, Հեռ. (0322) 3 84 62, 3 78 97 ,
shahumyan.lori@mta.gov.am

N Ե-13/17
*27 հունվար 2017թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Կից ներկայացնում եմ Շահումյան համայնքի ավագանու թիվ 01-Ա, 02-Ա, 03-Ն, 04-Ա, 05-Ն և 06-Ա որոշումները:

Առդիր 8 էջ:

1/27/2017

X

**Համայնքի ղեկավար՝** **Էդիկ Մանուկյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 01-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 Թ-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ **ավագանին որոշում է.**

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2017թ-ի հունվարի 23-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2017թ-ի հունվարի 23-ի թիվ 01 նիստի

1. Համայնքի սեփականություն համարվող գույքը ,,Լոռի-ջրմուղկոյուղի,, ՓԲԸ-ին նվիրաբերելու մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքում 2017թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
3. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի և Շահումյանի ,,Կրթամարզամշակութային համալիր,, ՀՈԱԿ-ի աշխատակազմերի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Շահումյան համայնքի 2017թ-ի բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին:
5. Ղարբի և Տանձուտ գետերի հուները վայրած ծառերից մաքրելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար** **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
# ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 02-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ,,ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ,, ՓԲԸ-ԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 594-րդ հոդվածի դրույթներով, հաշվի առնելով ՀՀ կառավարության նիստի 28.04.2016թ-ի թիվ 16 արձանագրությունը՝ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Շահումյան համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 06-084-1052-0003 ծածկագրի 0.01 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտնվող Լոռոնց գոմեր հանդամասի 1 հասցեի ջրահավաքը.
2. Շահումյան համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 06-084-1049-0002 ծածկագրի 0.08512 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտնվող 2 փող. 68 հասցեի ՕԿՋ-ն.
3. Շահումյան համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 06-084-1052-0002 ծածկագրի 0.01 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողամասի և նրա վրա գտնվող Լոռոնց Գոմեր հանդամաս 2 հասցեի ջրահավաքը.
4. Շահումյան համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային քարտեզի 06-084-0344-0016 ծածկագրի 0.3026 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների 2 փող. 81 հասցեի հողամասը.

նվիրաբերել ,,Լոռի-ջրմուղկոյուղի,, ՓԲԸ-ին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
6. Առաջարկել Շահումյան համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «Լոռի-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության և համայնքի միջև կնքել գույքի նվիրատվության մասին պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 03-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերի, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածների, ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետի դրույթներով՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

4. ՈՒժը կորցրած ճանաչել Լոռու մարզի Շահումյան համայնքի ավագանու 25.11.2016թ-ի ,,ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքում 2017թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,, թիվ 33-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար ԵԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 04-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ <<ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ, 28-րդ կետերով, "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածների դրույթներով՝ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Շահումյանի ,,Կրթամարզամշակութային համալիր,, ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել Շահումյան համայնքի ավագանու 2016թ-ի նոյեմբերի 25-ի ,,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,, թիվ 34-Ա որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՐՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 1
Շահումյան համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 23-ի N 04-Ա որոշման

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 16 :

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 280000 |
| Ղեկավարի տեղակալ | 1 | 140000 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 200000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 130000 |
| Առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 125000 |
| Առաջատար մասնագետ | 4 | 125000 |
| Առաջին կարգի մասնագետ | 2 | 110000 |
| Տնտեսվար | 1 | 100000 |
| Վարորդ | 2 | 85000 |
| Բակապահ | 1 | 80000 |
| Տեխնիկական աշխատող | 1 | 75000 |
| | | |

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 2
Շահումյան համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 23-ի N 04-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ,,ԿՐԹԱՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 14
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | *1* | *100 000* |
| Հաշվապահ | *1* | *90 000* |
| Գրադարանավար | *1* | *95 000* |
| Խմբավար սպորտի | *1* | *80 000* |
| Խմբավար պարի | *1* | *80 000* |
| *Խմբավար ասեղնագործության (գոբելեն ,մակրամե)* | *1* | *80 000* |
| Խմբավար գեղանկարչության(կավագործության) | *1* | *80 000* |
| Դաստիրակ | *1* | *90 000* |
| Խոհարար | *1* | *80 000* |
| Տնտեսվար | *1* | *80000* |
| Բակապահ | *2* | *80 000* |
| Տեխնիկական աշխատող | *2* | *75 000* |
| Ընդամենը | *14* | *1 165 000* |
| | | |

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 05-Ն

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի, ,, Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով՝

**ա վ ա գ ա ն ի ն  ո ր ո շ ու մ  է.**

Հաստատել Շահումյան համայնքի 2017թ-ի բյուջեում 23.01.2017թ-ին կատարված

փոփոխությունները:

1. Եկամուտների գծով

**Ընդամենը**- 66676700 /վաթսունվեց միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր/ դրամ: այդ թվում՝

· վարչական բյուջեի մասով - 66676700 /վաթսունվեց միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր դրամ

. ֆոնդային բյուջեի մասով - 1658000 /մեկ միլիոն վեց հարյուր հիսունութ հազար/ դրամ

2. Ծախսերի գծով

**Ընդամենը** - 68019500 /վաթսունութ միլիոն տասնինը հազար հինգ հարյուր/ դրամ

այդ թվում՝

· վարչական բյուջեի մասով - 66676700 /վաթսունվեց միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար յոթ հարյուր/ դրամ:

· ֆոնդային բյուջեի մասով - 3000800 /երեք միլիոն ութ հարյուր/ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
# ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 06-Ա

## ՏԱՆՁՈՒՏ ԵՎ ՂԱՐԲԻ ԳԵՏԵՐԻ ՀՈՒՆԵՐԸ ՎԱՅՐԱԾ ԾԱՌԵՐԻՑ ՄԱՔՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, հաշվի առնելով բնակչության անվտանգության հանգամանքը. Շահումյան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Լոռու մարզի Շահումյան համայնքի տարածքով հոսող Ղարբի և Տանձուտ գետերի հուներում գտնվող վայրաճ ծառերը սելավների ժամանակ առաջացնում են խցանումներ, գետերը դուրս են գալիս հունից՝ հեղեղելով ափամերձ տարածքները և մոտակա շինությունները:

Անհրաժեշտությունից ելնելով համայնքի ավագանին տալիս է իր համաձայնությունը գետերի հուները մաքրելու և վայրաճ ծառերը հատելու համար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՐԵՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ